«Նոր ժամանակի կրթություն» <

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Ստեփանյան Լուսինե

Ուսումնական հաստատություն՝ Ներքին Բազմաբերդի Ե. Ասատրյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 2

ԳԼՈՒԽ.1. ԷՊՈՍՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ..... 3

1.1. Ազգային էպոսների զարգացման պատմությունը.....3

1.2. <<ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ >> . Հայ ժողովրդական դյուցազնավեպի ծագումը 4

ԳԼՈՒԽ.2. ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԷՊՈՍՈՒՄ.....7

2.1. Էպոսի դերը հայրենասիրության և ազգային ինքնության պահմանման գործում 7

2.2«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» էպոսի բարոյական սկզբունքները՝ ազգային դաստիարակչության հիմքում 10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....13

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Էպոսների նշանակությունը անգնահատելի է տվյալ երկրի ազգային արժեքների և պետականության համար: Դրանք հանդիսանում են համաշխարհային և պատմական արժեքներ, որոնք ունեն դարերի պատմություն: Անդադար պատերազմների այս դարերում արդիական է էպոսներում առկա հերոսական և համամարդկային արժեքների ամրապնդումը:

Հայ ժողովրդի համար ներկա պետական ծանր իրավիճակում շատ արդիական է երեխաների և, ինչու ոչ, նաև մեծերի մեջ արթնացնելու հայրենասիրական ոգին և հայ մարդու գրված կամ չգրված արժեքները:

Տարբեր տարիների ընթացում եղել են էպոսի մշակումներ և վերլուծական աշխատանքեր , բայց վերջին տարիներին որոշ հեղինակներ փորձել են աղավաղել այս համամարդկային անգին ժառանգությունը: Հարկ ենք համարում ավելի դասաժամեր հատկացնել դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում էպոսի ուսումնասիրմանը:

Բաց ենք համարում նաև էպոսի շատ տարբեր լեզուներով թարգմանությունների բացակայությունը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում:

Նպատակից բխող խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել էպոսների ծագումը
2. Քննարկել էպոսի դերը հայրենասիրության գործում

Հետազոտական աշխատանքի օբյեկտը էպոսն է :

Հետազոտատական աշխատանքի առարկան ՝ էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում:

Հետազոտության մեթոդներ: Աշխատանքի մեջ օգտագործվել են պատմահամեմատական, դիտարկման և չափման մեթոդները:

ԳԼՈՒԽ.1. ԷՊՈՍՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Ազգային էպոսների զարգացման պատմությունը

Էպոս գործածվում է երկու իմաստով 1. Լայն առումով՝ գրական երեք սեռերից մեկը (էպիկական, քնարական, դրամատիկական), 2. նեղ ժանրային առումով՝ ժողովրդական հերոսական կամ ավանդական վեպ, վիպական բանահյուսության ծավալուն և բարդ տեսակ, որը բաղադրվում է վիպական ու պատմահերոսական երկերից, ավանդություններից, զրույցներից:

Ազգային էպոսը էպիկական բովանդակությամբ էպիկական ժանրի բանաստեղծության կամ գրականության գործ է, որը ավանդաբար ներկայացնում կամ արտացոլում է որևէ ազգի մշակութային կամ ինքնաճանաչողական ոգին, դա կարող է վերաբերել նաև ինքնուրույնության կամ անկախության ձգտող որևէ էթնիկական կամ լեզվաբանական խմբի:

Ազգային էպոսների մեջ հաճախ նկարագրվում է տվյալ ազգային էթնոսի ծագման և զարգացման պատմությունը. կամ պատմության մի մասը, կամ տվյալ ազգության ինքնորոշման կամ ինքնագիտակցման պատմության կարևորագույն դրվագները և այլ ազգային խորհրդանշանների ծագման կամ ընդունման պատմությունը:

Դիտարկենք մի քանի ազգային էպոսների, ինչպիս օրինակ հունական էպոսը:

Ոդիսական ստեղծվել է, հավանաբար, մ.թ.ա. VIII դարում: «Ոդիսականի» այուժեն ոչ թե հերոսական է, այլ հեքիաթային, արկածային և կենցաղային: Պատմում է Իթակե կղզու արքա Ոդիսևսի Տրոյական պատերազմից հետո տուն վերադառնալու ճանապարհին տասը տարի տևած արկածների, ինչպես նաև Իթակեում Ոդիսևսին սպասող հավատարիմ կնոջը՝ Պենելոպեին բաժին ընկած փորձությունների մասին: «Ոդիսականը» նույնպես բաժանված է 24 գրքերի կամ երգերի:

Կառուցվածքի առումով «Իլիականի» համեմատ «Ոդիսականն» ավելի բարդ է: Պոեմն սկսվում է պատմության կեսից, իսկ նախորդող իրադարձությունների մասին տեղեկանում ենք կենտրոնական երգերից: Գլխավոր հերոսն ավելի վառ է արտահայտված:

Տրոյա քաղաք-պետության արքայազն Ալեքսանդրը առևանգում է հունական Սպարտա պետության թագավոր Մենելայոսի կնոջը՝ Հեղինեին: Հեղինեն Զևսի դուստրն էր և ուներ առասպելական գեղեցկություն: Հեղինեի առևանգումը դառնում է Տրոյական պատերազմի պատճառ:

Գիլգամեշ, շումերաբաբելական հերոսական էպոսի պայմանական անվանումը: Այն աշխարհի ամենահին պահպանված գրական ստեղծագործություններից մեկն է, սեպագրերով գրված ամենամեծ երկը, Հին Արևելքի գրականության խոշորագույն նմուշներից մեկը: Էպոսն ստեղծվել է աքքադերենով շումերական ավանդազրույցների հիման վրա մեկուկես հազարամյակի ընթացքում՝ սկսած մ.թ.ա. 18-17-րդ դարերից:

Նրա առավել ամբողջական տարբերակը հայտնաբերվել է 19-րդ դարի կեսերին Նինվեում՝ Աշուրբանիպալի գրադարանում կատարված պեղումների ժամանակ: Այն գրված է տասներկու վեցայուն պնակիտների վրա մանր սեպագրերով, ներառում է շուրջ երեք հազար տող և թվագրված է մ.թ.ա. 7-րդ դարով: Քսաներորդ դարում գտնվել են նաև հատվածներ էպոսի այլ տարբերակներից, այդ թվում՝ խուռիերեն և խեթերեն:

Ամփոփելով վերը նշված փաստերը՝ կարող ենք եզրակացնել, որ էպոսները և վիպական բանահյուսությունները, ունենալով դարերի պատմություն, ներկայացնում են տվյալ երկրի արժեքային համակարգը, իսկ դրանցում ներառված կերպարները արտացոլում են տվյալ ժողովրդի հավաքական կերպարը:

1.2. <<ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ >> . ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՅՈՒՑԱԶՆԱՎԵՊԻ ԾԱԳՈՒՄԸ

«**Սասնա ծռեր**» կամ «**Սասունցի Դավիթ**», հայ ժողովրդի ազգային էպոս կամ դյուցազնավեպ, որը ստեղծվել է ժողովրդական բանահյուսության հիման վրա: Վիպասացների և բանահավաքների կողմից այն կոչվել է նաև «**Սասնա փահլևաններ**», «**Սասնա տուն**», «**Ջոջանց տուն**», «**Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ**», «**Դավիթ և Մհեր**», «**Դավթի պատմություն**», «**Դավթի հեքիաթ**» և այլն:

Էպոսի գաղափարական ոգին հայ ժողովրդի հերոսական մաքառումն է թշնամիների դեմ՝ հանուն ժողովրդի ազատության և անկախության, հայրենիքի և պետականության պահպանման: Հայոց դյուցազնավեպը գաղափարական առումով արտացոլում է նաև իրականությունից ունեցած դժգոհությունն ու կառուցվելիք արդար աշխարհի նկատմամբ ունեցած փափագը՝ բոլոր դեպքերում գովաբանելով օտարի լծի դեմ ելած ժողովրդի հերոսական պայքարը:

Էպոսը համահավաք տարբերակով կոչվում է «Սասնա ծռեր»: «Ծուռ» բառն այս պարագայում ունի իմաստային մի քանի նշանակություններ՝ դիվահար, խենթավուն, խելահեղ քաջ և այլն: Տվյալ հատկանիշներից յուրաքանչյուրն էպոսի հերոսների համար բնորոշ է այս կամ այն պարագայում: «Սասնա ծռեր» էպոսը կառուցվածքային առումով կազմված է վիպական չորս մասերից կամ ճյուղերից, որոնցից յուրաքանչյուրը կոչվել է տվյալ ճյուղի գլխավոր հերոսի անունով՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ», «Փոքր Մհեր»:

Հերոսների այս չորս սերունդը միմյանց հետ կապված են ազգակցական կապերով: «Սասնա ծռերի» ամենաբնորոշ գիծը հերոսական անպարտելի ոգին է՝ պայմանավորված նրա նախահիմքում ընկած առասպելական դյուցազունների սխրանքներով և հայ ժողովրդի՝ իր ոսոխների, հատկապես արաբական բռնակալության դեմ մղած դարավոր պայքարով:

Էպոսի ստեղծման հստակ թվականը մեզ հայտնի չէ, քանի որ վերջինս գալիս է ժամանակի խորքից և ունի պատմական խոր ակունքներ: Էպոսի ասացողները էպոսը պատմել են հայկական տարբեր բարբառներով՝ մեծ մասամբ մոկաց, մշո, սասնա, ինչպես նաև արարատյան:

Հայկական մշակույթում «Սասնա ծռեր» ազգային էպոսն առանձնահատուկ տեղ է գրավում: Այն ծնունդ է առել Հայկական լեռնաշխարհի ամենագողտրիկ անկյուններից մեկում՝ Սասունում: Սասունը պատմական Մեծ Հայքի Աղձնիք նահանգի տասներորդ գավառն է, որը տարածվում է Հայկական Տավրոս լեռների վրա:

Սասունը լեռնային երկրամաս է, որի տարածքում են գտնվում հայտնի Ծովասար և Մարաթուկ լեռնագագաթները: Սասունցիներն աչքի են ընկել միայն իրենց տեսակին հատուկ համառությամբ, հայրենիք ու հող պաշտելով և մի փոքր էլ «ծուռ» լինելով:

Հայոց ազգային էպոսը փոխանցվել է բանասացների և վիպասացների միջոցով՝ տարբեր պատումների ձևով: Ինչպես, օրինակ՝ տարոնցի երեսփոխան Կրպոյից Գարեգին

Սրվանձտյանը գրի է առել և այնուհետև 1874 թ-ին հրատարակել «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով էպոսի պատումներից մեկը: Այնուհետև մոկացի Նախո Քեռի-ից 1889թ-ին Մանուկ Աբեղյանը գրի է առնում մեկ այլ տարբերակ և հրատարակում «Դավիթ և Մհեր» վերնագրով:

1939 թ-ին՝ վիպերգի ստեղծման 1000-ամյակի առթիվ, 60 պատումների հիման վրա կազմվել է միասնական, համահավաք բնագիր (հեղինակներ՝ Մանուկ Աբեղյան, Գևորգ Աբով, Արամ Ղանալանյան), որն ամբողջական և հստակ պատկերացում է տալիս էպոսի մասին:

Նաև պետք է նշել, որ Հովսեփ Օրբելին՝ Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսը (1935), եղել է «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագրի խմբագիրն ու մեծարժեք առաջաբանի հեղինակը:

«Սասունցի Դավիթ» էպոսի կոթողային էությունը և նրա ազգային, գեղարվեստական արժեքը Հովսեփ Օրբելին նշել է ամենատարբեր առիթներով: 1950 թվականին ՀՍՍՌ ԳԱ տեղի ունեցած գիտաժողովի ժամանակ Հ.Օրբելին կարդացել է զեկուցում «Պալատական շինությունները X դարի Հայաստանում» թեմայով և վերստին խոսել է «Սասունցի Դավիթ» էպոսի մասին:

Էպոսագետը հանգամանալի խոսում է «Սասունցի Դավթի» պատմական միջուկի ու ձևավորման մասին: Նրա կարծիքով էպոսի Գագիկ թագավորի կերպարը պատմականորեն հավաստի է: Դա Գագիկ Արծրունին է, որը կառուցել է Ոստան քաղաքը, վերաշինել Աղթամար կղզու բերդերն ու ամրությունները և հայ ճարտարապետության սքանչելի հուշարձաններից մեկը՝ Ս.Խաչ եկեղեցին, իր հրաշք բարձրավանդակներով, որը վաղուց բոլորել է իր հազարամյակը:

Ամփոփելով փաստերը՝ կարող ենք հաստատել, որ բազմաթիվ են եղել փորձերը վերամշակելու և նորովի ներկայացնելու հայկական դյուցազնավեպը: Իհարկե, դրանք չեն սպառում հայ ժողովրդական էպոսի հետ կապված բոլոր հարցերը, սակայն հեղինակները իրենց առջև այդպիսի խնդիր չեն էլ դրել, քանի որ էպոսի բարձր արժեքը հենց իր դժվար ընկալումների մեջ, և յուրաքանչյուր ոք ինքն է գտնում իր համար հոգեհարազատ արժեքների պատկերավորումը էպոսում: Վերը նշված մարդկանց նպատակը եղել է , շոշափել էպոսում առկա խնդիրները և դրանց հիման վրա տալ նրա իբրև վիպական-գեղարվեստական ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:

ԳԼՈՒԽ.2. ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԷՊՈՍՈՒՄ

2.1. Էպոսի դերը հայրենասիրության և ազգային ինքնության պահմանման գործում

Անհեղինակ, ժողովրդական ստեղծագործություններում՝ առասպելներում, էպոսում, հեքիաթներում և ավանդազրույցներում, ինքնաբուխ ձևով դրսևորվում են տվյալ ազգի ինքնության, աշխարհատեսության, հոգեկերտվածքի և վարքագծի գծերը, երկարատև հարմարումների հետևանքով ձևավորված արժեքային մոտեցումներն ու դիրքորոշումները: Յուրաքանչյուր ժողովրդի ստեղծած էպոս կամ ավանդազրույց իր մեջ ամբողջացնում է տվյալ ժողովրդի հոգևիճակը , ճաշակը , զգանցմունքները, խիստ վերաբերմունքը ինչ որ երևույթի շուրջ, կարճ ասած, ժողովրդի հայելին է:

Քանի որ առասպելները, էպիկական պատումները, լեգենդներն ու ավանդազրույցները գալիս են դարերի խորքերից ու իրենց վրա կրում են այդ դարերի կենսակերպի ու մտածելակերպի հետքերը, ապա դրանք լավագույնս արտացոլում են Աստծո, բնության, հասարակության, մարդու, կյանքի, ազգի, հայրենիքի, պետության և այլ արժեքների ու երևույթների վերաբերյալ տվյալ ժողովրդի ինչպես ավանդական պատկերացումները, այնպես էլ դրանց փոխակերպումները:

Այլ խոսքով, էպիկական կերպարների, հատկապես հերոս-դյուցազունների սխրագործությունների, վարք ու բարքի վերլուծությունն անսպառ նյութ կարող է տալ ոչ միայն նրանց, այլև տվյալ ազգի մտածելակերպն ու գործելակերպը, բարոյահոգեբանական յուրահատկությունները որոշ իմաստով հասկանալու ու գնահատելու համար:

Տվյալ դեպքում մեր խնդիրն է ազգային ինքնության ու նկարագրի համատեքստում վերլուծել հայկական էպոսի հերոսների վարքագծի որոշ դրսևորումներ՝ ուշադրություն դարձնելով դրանցում ոչ միայն դրական, այլև դրականից բխող կամ այլ դիտանկյունից մեկնաբանության դեպքում բացասական, անհեթեթ թվացող բնավորության գծերը, վարքաձևերը, արժեքային դիրքորոշումներն ու մոտեցումները:

Իրականության բարոյական արժեքավորման գերակայությունը վկայում է տվյալ ժողովրդի ոչ միայն մարդասիրության, բարության, խաղաղասիրության, այլև առաջին

հերթին թուլության, տկարության, խեղճության ու անճարության մասին: նրանք թուլությունից, խեղճությունից դրդված չեն կատարում բարոյական արարքներ, այլ դա իրենց ապրելակերպն է, կենսաոճը, մարդկանց, հատկապես ուրիշների հանդեպ վերաբեր-մունքի կերպը: Սակայն էպոսի հերոսների բարոյական արարքները, եթե դիտարկում ենք «կյանքի օրենքների» տեսանկյունից, ապա տեսնում ենք, որ դրանք հակասում են ազգամիջյան համակեցության, քաղաքականության մեջ գործող իրական կանոններին, ողջախոհության պահանջներին ու ազգային շահերին:

Հայկական էպոսի հերոսները «ծուռ» են, այսինքն՝ խենթ են, խենթավուն, միամիտ և, բնականաբար, նրանց անսովոր արարքները ծիծաղ, զարմանք ու քրքիջ են առաջացնում նաև այն պատճառով, որ չեն տեղավորվում առօրյա քաղքենական և ուժի իրավունքի վրա խարսխված բարոյականության շրջանակներում:

Նման դեպքերում վտանգավորը ոչ թե ինքնին իրականության, մարդկանց վարքի ու արարքների բարոյական արժեվորումն է, այլ, նախ, դրա բացարձակացումը, երկրորդ, կեցության համատեքստի և մրցակից ազրեսիվ բարոյական համակարգի անտեսումը: Հայկական էպոսում բազմաթիվ են այն օրինակները, երբ իրար են բախվում երկու անհաշտ բարոյական համակարգեր:Ահա կյանքի բարոյական արժեքավորման բացարձակացման հետևանքներից մեկը՝ սեփական ուժերով թշնամի աճեցնելը:

Մըսրա Մելիքը, մեծանալով ու հավատարիմ մնալով իր մորական ցեղի բարոյականությանը, իր հոր՝ սասունցի Մհերի մահվանից հետո հարձակվում է նրա երկրի վրա, ավերում, գերեվարում ու սպանում. կողոպտում ու թալանում Սասունը:

Դ. Դեմիրճյանը գրում է. «Հայի ամենամեծ առաքինությունն ես ուզում. ամենաներողամիտ ցեղը աշխարհիս մեջ>>:

Ինչ-որ իմաստով իրականության բարոյական արժեքավորման բացարձակացման հետևանքներից են նաև թշնամու նկատմամբ անիմաստ մեծահոգությունը, անշրջահայաց, անհիշաչար ու չափից դուրս հանդուրժողական վերաբերմունքը և ուրիշներին իշխելու, նվաճելու ու տիրելու կամքի բացակայությունը:

Քանի որ հայը անհիշաչար ու թշնամիատյաց չէ, ուստի չի տառապում վրեժխնդրությամբ: Եթե անգամ վրիժառու է դառնում (երբ դանակը հասնում է ոսկորին), ապա ժամանակավոր, այնքանով, որքանով թշնամուն հալածելով՝ պիտի հեռացնի իր երկրից: Այնքան է «հարգում» թշնամուն, որ նրա դեմ պատերազմելիս նույնիսկ չի ուզում անակնկալի բերել: Այսպես,

Սասունցի Դավիթը, երբ կռվի է դուրս գալիս թշնամու բանակների դեմ, ամեն անգամ հարձակումից առաջ զգուշացնում է՝

Ով քընած է՝ արթուն կացեք,

Ով արթուն է՝ ձիեր թամբե՛ք,

Ով թամբեր է՝ զենքե՛ր կապեք,

Ով կապեր է՝ էլե՛ք, հեծե՛ք.

Չ՛ասեք Դավիթ գող-գող էկավ,

Գող-գող գընաց (էջ 322):

Էպոսում բազմաթիվ են հերոսական դրվագները , որոնք հայրենասիրություն են քարոզում, բայց միևնույն ժամանակ կա իշխանատենչության բացակայություն, որով պետք է բացատրել այն, որ էպոսի հերոսներն ամուսնանում են թագուհիների հետ, բայց այդպես էլ ո՛չ իրենք են թագավոր դառնում, ո՛չ էլ թագուհիներն են պահպանում իրենց նախկին կարգավիճակը:

Էպոսի հերոսները մի կողմից չեն ուզում տիրանալ ուրիշների թագավորությանը, ուզում են, որ յուրաքանչյուր ժողովուրդ ապրի ինքն իր համար, լինի իր գլխի տերը, մյուս կողմից՝ չեն մտածում Սասունի ինքնիշխանության ամրապնդման, անկախ պետության ստեղծման ու կայացման մասին:

Նմանատիպ համեմատություններ և դրվագներ կարող են հաճախ գտնել, որոնք խորը վերլուծության կարիք ունեն և նոր սերունդի մոտ ազգային արժեքների մասին նոր պատկերացումները տեղիք կարող են տալ: Միանշանակ էպոսը ուսումնասիրելը նոր սերնդի համար շատ կարևոր է, բայց դա չի նշանակում, որ էպոսում առկա բոլոր մտքերը և արժեքները ճիշտ են և բարոյական , ժամանակները փոխվում են , դրան զուգահեռ նաև փոխվում է մտածելակերպը, նպատակը, որ յուրաքանչյուր ոք գտնի, վերցնի դրականը և բացասականից դասեր քաղի: Եվ միգուցե, այս բացասական դրվագներով հայ ժողովուրդը ներկայացրել է դարերի ընթացքում իր պարտությունների պատճառները:

Վերը նշված վերլուծության ընթացքում նշված կարծիքների վառ դրսևորում էր 44֊ օրյա պատերազմը, թշնամին ամեն պահ մտածում է հային կոտորելու, ունեցվածքը թալանելու

մասին, իսկ հայը մտածում է, թե երևի փոխվել են նրա աշ խարհայացքը, բարոյական սկզբունքները, հետևաբար ուրիշների հանդեպ վերաբերմունքը, կամ՝ նա «կշտացել» է նախորդ անգամվա ալան-թալանից ու կոտորածներից, ուստի լրջորեն չի մտածում պաշտպանվելու մասին: Հայը թշնամուն չի ճանաչում, ավելին, չի էլ ձգտում խորապես ճանաչել նրա առավելություններն ու թերությունները, քաղաքական ծրագրերը, գաղափարախոսությունը, ցեղային հոգեբանությունը, իսկ եթե իր կենսափորձից ելնելով ինչ-որ բան ճանաչում է, ապա դա անտեսում է, հաշվի չի առնում կամ պարզապես թերագնահատում է նրան: Եվ այսպես, կարող ենք փաստել, որ մինչ օրս էլ << Սասունցի Դավիթ>> էպոսը արտացոլում է հայ ժողովրդի հավաքական կերպարը և էպոսում տեղ գտած հերոսները արդիական են ավելի քան երբևէ՝ թե՛ դրական , թե՛ բացասական դրսևորումներով:

2.2 «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՒՄ

Ժամանակակից սերնդի բարոյական դաստիարակության համար խիստ կարևոր է կրթական գործընթացում ժողովրդական էպոսի լիարժեք կիրառությունը: «Սասնա ծռեր» դյուցազնավեպը համամարդկային գաղափարներ արծարծող լայնակտավ էպիկական ստեղծագործություն է, որի պատմական, գեղարվեստական նշանակությունն անվիճելի է:

Նույնքան անվիճելի է հայոց հանճարի այս բանավոր արտահայտության մանկավարժական արժեքը. էպոսը դաստիարակության յուրօրինակ հանրագիտարան է, որից բարոյապես մաքուր ապրելու դասեր են քաղել բազում սերունդներ:

Էպոսում փառաբանվում է աշխատանքը: Հստակ երևում է՝ մեր ժողովուրդը գիտակցել է, որ աշխատանքը հասարակության զարգացման, մարդու գիտակցության և մշակույթի հիմքն է, և էպոսում վերաբերմունքը դեպի աշխատանքը ներկայացվում է որպես բարոյական սկզբունք:

Այս առումով յուրաքանչյուր մանկավարժի նպատակն է, քննության առնելով աշխատանքի նկատմամբ բարոյական վերաբերմունքի սկզբունքը՝ որպես ազգային գաղափարախոսություն, պատանիներին դաստիարակել նույն ոգով:

Աշխատանքի հետ ունեցած կապի և աշխատանքի նկատմամբ վերաբերմունքի միջոցով է, որ անհատներին վերագրվում են բարոյական բարձր արժեքներ, սովորույթներ, պարտավորություններ: Էպոսի հերոսները մարդկային գոյության հիմքն ու կյանքի իմաստը տեսնում են աշխատանքի մեջ: Բաղդասարը Սանասարին ասում է, «Եթե չաշխատիս, չուտիս: Ով աշխատի, նա ուտի... մենք գնանք մշակության, աշխատենք և ուտենք»:

Սասնա հերոսները միայն ռազմիկներ չեն, ոչ էլ անձնական փառքի ու երջանկության համար մարտնչողներ. Նրանք, ամենից առաջ, ապրում են աշխատավոր մարդկանց հոգսերով: Սանասարն ու Բաղդասարը հսկայական ժայռաբեկորներից կառուցում են իրենց և ուրիշների տները:

Աշխատում են և աշխատանքում են հերոսացվում ժողովրդի կողմից: Նրանք երջանիկ են աշխատանքի մեջ և աշխատանքով:

Որպես դաստիարակչական յուրօրինակ մեթոդական ուղեցույց օգտագործելով էպոսը՝ մենք դառնում ենք նրա գաղափարների ոչ միայն կրողը, այլ պարտավորված տարածողը: Եվ այս կարևոր առաքելությունն իրականացնողը ոչ միայն գրականության ուսուցիչն է, այլ ողջ դատիարակչական համակարգը:

Դպրոցի խնդիրն է՝ ցույց տալ Սասնա ծռերի բարոյական հատկանիշները՝ բացահայտ և միջնորդավորված: Երկու դեպքում էլ ազգային դաստիարակության հարցի լուծմանն ենք նպաստում:

Հայրենասիրության գաղափարը էպոսի միջոցով պատանիներին հասանելի դարձնելը շատ կաևոր է: Այստեղ հայրենասիրությունը համազգային և համամարդկային բնույթ ունի: Էպոսում ժողովրդի ցասումն ամենից առաջ ուղղված է արտաքին բռնակալության դեմ: Բայց, իհարկե, սխալ կլինի կարծել, որ Սասնա հերոսների օրինակով հայրենասիրությունը, համազգային ընդգրկում ձեռք բերելով, ստվերում է երկրի ներսում եղած հակասությունները:

Ինչպես էպոսում է արտաքին մարտահրավերին դիմակայելը հիմնական համարվում, այնպես էլ՝ ժամանակակից կյանքում: Ապրիլյան պատերազմի հերոսներին համեմատելով էպոսի հերոսների հետ՝ հայրենասիրական որակներով և նաև ներքին հակասությունները

ժամանակավոր մի կողմ դնելու առումով՝ փաստում ենք, որ նրանք նույն արյան կանչն ունեն: Էպոսում հայրենասիրությունը համազգային է, քանի որ թշնամին գալիս է ոչ միայն շահագործելու, հարկ տանելու, այլև ոչնչացնելու ժողովրդին, կործանելու երկիրն այնպես, որ «Ալ Սասուն անուն չեղնի աշխարքի մեջ», մի հանգամանք, որ ստիպել է «սաղ Սասունը» ոտքի հանելու, իր էությամբ ներքին կռիվը վերլուծելու համազգային պատերազմի: Այսօր էլ էպոսի հայրենասիրական ձևն ու դրսևորումը արդիական է: Ոչ գերբնական է, ոչ էլ չափազանցված: Այսօր էլ աշխատավոր ժողովուրդն է հայրենասիրության կրողը, էպոսում էլ նույնն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով հետազոտական աշխատանքը՝ կարող ենք եզրակացնել, որ ազգային էպոսները և ավանդազրույցները իրենց մեջ ամբողջացնում են ազգային արժեքները, և՛ առավելությունները, և՛ թերությունները: Ունենալով դարերի պատմություն՝ չեն կորցնում իրենց կարևորությունը և արդիական են նաև 21-րդ դարի մարդու համար:

Չենք կարող ասել, որ էպոսներում նկարագրվող արժեքներով կարող ես գոյատևել այս դարում, բայց միևնույն ժամանակ հայրենասիրական ոգին և մարդկային պարզագույն արժեքներն են պահպանել մեր ազգային ինքնությունը և հենարանը հանդիսացել հայ ժողովրդի մինչև օրս գոյության գործում:

Ներկայումս օգտվելով համապատասխան մարմինների անգործությունից՝ որոշ <<նորահայտ գրողներ >> փորձում են խեղաթյուրել հայ էպոսը՝ փորձելով էպոսի կերպարների և ներկայիս արժեքների միջև զուգահեռ անցկացնել: Չակերտավոր ասած , թարգմանել էպոսը գրական հայերեն՝ արարքը արդարացնելով, թե երեխաները չեն ըմբռնում բարբառը: Այս գործողությունները հետևանք են ազգային սրժեքների արժեզրկման , էպոսի աղավաղման և դարերի ահռելի ժառանգության ոչնչացմանը: Այս ամենը նույն է, թե գրական հայերենով վերամշակվի Միսաք Մեծարենցի << Աքասիաներու շուքին տակ>> ստեղծագործությունը: Յուրաքանչյուր հեղինակի վերամշակում պետք է գրաքննվի :

Ի վերջո, շատ ենք կարևորում դպրոցական և համալսարանական ծրագրերում էպոսի խորը ուսումնասիրությունը: Էպոսում առկա բազմաթիվ խրատադաստիարակչական և բարոյական օրինակների շնորհիվ երեխաների մեջ կարող ենք ձևավորել հայրենասեր և բարոյական հայի կերպարը: Ինչպես օրինակ էպոսում մեծ նշանակություն է տրվում նախնիների, հերոսների հիշատակը հարգելուն և արժևորելուն:Թեև նրանք հեռու անցյալում են, բայց, ինչպես Թումանյանն է ասում, «գործն է անմահ», իսկ այն, որ յուրաքանչյուր արժանի նախնի «օղորմի» է ստանում, դրանով արդեն գնահատում և արժևորում ենք գործը:

Եվ վերջում առանց աղավաղելու պահպանելով և փոխացելով էպեսը հաջորդ սերունդներին, կպահպանվի ազգային նկարագիրը, արժեքները և հայրենասիրությունը: Էպոսը հայ ժողովրդին դաստիարակելու ուղեմատյանն է եղել դարեր շարունակ և այդպես էլ կմնա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գրիգորյան Գր., Հայ ժողովրդի հերոսական էպոսը, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Եր., 1960:
2. АРМЯНСКО-РОССИЙСКИЙ МЕЖДУНАРОДНЫЙ УНИВЕРСИТЕТ “МХИТАР ГОШ”, НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЕ СТАТЬИ, 2019 / N1.
3. Զաքարյան Ս. , Հայ ինքնության հիմնահարցեր, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2020:
4. ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻՆ ԵՎ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԷՊՈՍԸ , Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հոդվածների ժողովածու ԵՐԵՎԱՆ – 2015:
5. https://www.google.com/url?sa=t&source=web&rct=j&url=https://hy.m.wikipedia.org/wiki/%25D4%25B7%25D5%25BA%25D5%25B8%25D5%25BD&ved=2ahUKEwivtJzzufD5AhW0Q_EDHQYzDqgQFnoECAMQAQ&usg=AOvVaw2ydrucAvHraTBl284OqxlH:
6. https://www.google.com/url?sa=t&source=web&rct=j&url=https://www.armgeo.am/armenian-national-epic/%3Famp%3D1&ved=2ahUKEwivtJzzufD5AhW0Q_EDHQYzDqgQFnoECEYQAQ&usg=AOvVaw3YDGgN2S4eisicAWhzOdWy:
7. https://www.google.com/url?sa=t&source=web&rct=j&url=https://hy.m.wikipedia.org/wiki/%25D4%25B3%25D5%25AB%25D5%25AC%25D5%25A3%25D5%25A1%25D5%25B4%25D5%25A5%25D5%25B7_(%25D5%25A7%25D5%25BA%25D5%25B8%25D5%25BD)&ved=2ahUKEwjo3L28uvD5AhVlX_EDHSIRDzwQFnoECBEQAQ&usg=AOvVaw1vHSsEmH74CQYeAFEl9Er5: